ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1953 Общественные науки

Ն. Խալեյան

ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՀԵՏ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 1903—1918 ԹԹ.

Ստեփան Գևորգի Շահումյանի կյանքի և ռևոլյուցիոն գործունեության մեջ ամենափայլուն էջերից մեկն է նրա անձնական կապը Սովետական Միության Կոմունիստական պարտիայի, սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինի հետ։ Այդ կապը արտահայտվել է Լենինի և Շահումյանի հանդիպումներով և փոխադարձ նամակագրությամբ, որն ունի իր ուշադրավ և ուսանելի պատմությունը։

Ստեփան Շահումյանը Լենինի հետևողական աշակերտն է եղել, նրա մարտական զինակիցը։ Իր ռևոլյուցիոն գործունեության առաջին իսկ տարիներից նա համարձակորեն նվիրվեց պրոլետարիատի ազատագրության այն մեծ պայքարին, որը մղում էր Վ. Ի. Լենինը Ռուսաստանում ռևոլյուցիոն մարքսիստական-բոլշևիկյան պարտիա ստեղծելու համար։ Անսահման հավատով և նվիրվածությամբ տոգորվելով լենինյան գաղափարներով, Շահումյանին բախտ վիճակվեց սկզբից ևեթ անձնական ամենասերտ կապեր հաստատել Վ. Ի. Լենինի հետ, աշխատել նրա ձեռքի տակ, արժանանալ նրա համակրանքին և ուշադրությանը։ Այդ հանգամանքը վճռական նշանակություն ունեցավ Շահումյանի բոլշևիկյան գաղափարների ձևավորման գործում։

Ռևոլյուցիոն պայքարի պրոցեսում, Լենինի հետ ունեցած կապերի մեջ Շահումյանն աճեց ու դարձավ լենինյան տիպի պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներ, պարտիայի ու պրոլետարիատի ականավոր կազմակերպիչ, հրապարակախոս-ժուռնալիստ, մարքսիզմ-լենինիզմի խոհուն թեորետիկ։ Ոչ ցարական ոստիկանության հետապնդումները, ոչ էլ հաճախակի բանտարկությունները և աքսորները նրան չշեղեցին լենինյան ուղուց։ Նա իր ամբողջ կյանքում հավատարիմ մնաց Լենինին և լենինիզմին։

* * *

Ստ. Շահումյանի առաջին ծանոթությունը Լենինի հետ սկսվում է Լենինի երկերի ուսումնասիրությունից, որը Շահումյանը սկսել էր դեռևս անցյալ դարի 90-ական թվականների վերջերից։

Մտնելով ռևոլյուցիոն շարժման մեջ, Շահումյանը 1900—1902 թվականների ընթացքում՝ սկզբում Անդրկովկասում, հետագայում Ռիգայում և Ռեվելում սովորելու տարիներին, որպես ակտիվ ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատ, լենինյան-իսկրայական, պարտիայի հանձնարարությամբ պրոպագանդիստական աշխատանքներ է տանում ուսանողական մարքսիստական խմբակներում, բանվորական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ։ Նա միաժամանակ հանգամանորեն ուսումնասիրում է ռուս ռև-

վոլյուցիոն դեմոկրատների աշխատությունները, միջազգային բանվորական շարժման պատմությունը, մարքսիզմի թեորիան։

1902 թ. մարտին Շահումյանը ուսանողական ռեոլյուցիոն շարժումներին մասնակցելու պատճառով, վտարվում է Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտից և ուղարկվում է Թիֆլիս, որտեղ գործնական մասնակցություն է ունենում Ի. Վ. Ստալինի գլխավորած ռեոլյուցիոն բանվորական շարժումներին, լենինյան-իսկրայական կազմակերպությունների ծավալման ու ամրապնդման գործին։

1902 թ. Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը և Թիֆլիսի գեկավար պարտիական խմբի շարքերում աշխատող մի խումբ հայ իսկրայականներ կազմակերպում են «Հայ սոցիալ-դեմոկրատների միություն»։

1902 թ. հոկտեմբերի 1-ին՝ Թիֆլիսում լույս է տեսնում «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» անլեգալ օրգան «Պրոլետարիատ» թերթը, որը, հայերեն լեզվով լենինյան-իսկրայական ուղղությամբ առաջին պարբերականն էր Անդրկովկասում։

«Պրոլետարիատը» վրացական սոց. դեմ. «Բրձոլա» թերթի հետ միասին՝ եռանդուն կերպով պրոպագանդում է լենինյան «Իսկրա»-ի գաղափարները։

«Հայ սոցիալ-դեմոկրատների միության Մանիֆեստը», որը գրված էր Ստեփան Շահումյանի անմիջական մասնակցությամբ ու խմբագրությամբ, ամբողջապես ելակետ էր ունեցել «Իսկրա»-ի էջերում տպագրված, Լենինի գեկավարությամբ մշակված ՌՍԴԲՊ ծրագրի նախագիծը։ «Պրոլետարիատ»-ը քննադատում և մերկայնում էր «էկոնոմիստներին», նրանց տարերայնության օպորտունիստական թեորիան, պաշտպանում էր բանվորական շարժման մեջ սոցիալիստական գիտակցություն մտցնելու մասին լենինյան իդեան, արծարծում էր բանվոր դասակարգի քաղաքական պայքարի խնդիրները, քաղաքական պարտիայի ստեղծման անհրաժեշտությունը։

«Պրոլետարիատ»-ը իրեն համարելով համառուսաստանյան սոցիալ-դեմոկրատական շարժման տեղական օրգան՝ պաշտպանում և պրոպագանդում էր պարտիայի կազմակերպման ինտերնացիոնալ-դասակարգային սկզբունքը, Անդրկովկասի պրոլետարիատի պայքարի անխզելի կապը Ռուսաստանի բանվոր դասակարգի պայքարի հետ։

Լենինյան դիրքերից ջախջախիչ հարվածներ հասցնելով էկոնոմիստներին և միջազգային օպորտունիզմին—բերնշտայնականությանը, թերթը ընդգծում է, որ «սոցիալիզմի իրականացումը մեր կարծիքով անհնարին է բանվոր դասակարգի ոչ տնտեսական ինքնագործունեությամբ, ոչ էլ մասնակի քաղաքական և սոցիալական ռեֆորմներով. այն հնարավոր է միայն գոյություն ունեցող ամբողջ կարգի արմատական հեղաբեկման միջոցով, սոցիալիստական ռեոլյուցիայի միջոցով, որի անհրաժեշտ նախերգանքը պետք է ծառայի պրոլետարիատի քաղաքական դիկտատուրան»։

Այդ նպատակի իրականացման համար Մանիֆեստում հետևողականորեն անց էր կացվում պարտիայի կառուցման լենինյան պլանի կենսագործումը.

«... Մեր մատաղ շարժումը,— ասված է Մանիֆեստում,— իր մոտավոր նպատակն ունի՝ բարձրացնել մեր բանվորական մասսաներում քաղաքական կռվի անհրաժեշտ գիտակցությունը, միացնել նոցա, ու. մաս-

նտկիր անել համառուսական շարժմանը միապետությունը տապալելու համար»։

«Պրոլետարիատ» թերթը իդեական կապերից բացի, «Իսկրա»-ի հետ կապվեց նաև կազմակերպչական կապերով, որի կոնկրետ արտահայտությունն էր «Պրոլետարիատ» թերթի խմբագրության այն հայտարարությունը, որով իր թղթակիցներից խնդրում էր թերթի համար հոդվածներ ու նամակներ ուղարկել «Իսկրա»-ի խմբագրության հասցեով[2]։ Այդ բանը իհարկե արվում էր միաժամանակ այն նպատակով, որպեսզի Անդրկովկասից նոր թղթակիցներ կապվեին հենց «Իսկրա»-ի հետ։

1902 թ. Շահումյանը ուսումնական տարվա սկզբից մեկնում է Գերմանիա և ընդունվում է Բեռլինի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի պետական իրավունքի բաժնում սովորելու։ Նա այնտեղից Լոնդոն՝ Լենինին է ուղարկում «Պրոլետարիատ» թերթի № 1-ը, նրան ծանոթացնում «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» և «Պրոլետարիատ» թերթի ամբողջ բովանդակության հետ։

1903 թ. փետրվարի 1-ին «Իսկրա» թերթի № 33-ում Վ. Ի. Լենինը հանդես է գալիս «Հայ սոցիալ-դեմոկրատների միության Մանիֆեստի մասին» ծավալուն հոդվածով։

«Կովկասում երևան է եկել մի նոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»,—գրում է Վ. Ի. Լենինը։—Այդ Միությունը, ինչպես մեզ հայտնի է, ավելի քան կես տարի է, ինչ սկսել է իր պրակտիկ գործունեությունը և արդեն ունի իր օրգանը հայերեն լեզվով։ Մենք ստացել ենք № 1-ը այդ օրգանի, որը կոչվում է «Պրոլետարիատ» և որի վերնագրում նշված է «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիա»[3]։

Վ. Ի. Լենինը հավանություն է տալիս թերթի ուղղությանը, նրա առաջնորդողը համարյա ամբողջությամբ վերաշարադրում է իր հոդվածի մեջ, բարեկամաբար դիտողություն է անում ֆեդերացիայի հարցի ոչ ճիշտ ձևակերպման առթիվ և խորհուրդ է տալիս ուղղել այն.

«Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» Մանիֆեստը և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը,—գրում է Լենինը։— Խիստ ցանկալի կլիներ, որ այդ փորձը հասցվեր մինչև վերջը»[4]։

Լենինի ջերմ գնահատականը ոգևորում է Շահումյանին և մյուս հայ սոցիալ-դեմոկրատներին։

Շահումյանը Բեռլինում կրկնապատկված եռանդով լծվում է պարտիական աշխատանքին, կապվում է Բեռլինի իսկրայականների կենտրոնի հետ, ընկնում է ռուս ռևոլյուցիոն էմիգրանտների շրջանը և ակտիվորեն մասնակցում է ռուս ուսանող իսկրայականների պարապմունքներին, խորանալով մարքսիստական տնտեսագիտության և փիլիսոփայության մեջ։ Նա ծանոթանում է գերմանական բանվորական շարժման ղեկավարների՝ Ավգուստ Բեբելի, Ֆրանց Մերինգի և մյուսների հետ։ Շրջում է Բեռլինի

[1] Տես «Պրոլետարիատ», № 1, 1902 թ., հոկտեմբեր։
[2] Նույն տեղում։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 6, էջ 408։
[4] Նույն տեղում, էջ 411։

ամենահեռավոր բանվորական թաղամասերը, ծանոթանում է բանվորների գրության, կենցաղի ու տրամադրությունների հետ, մասնակցում է բանվորական ժողովներին, միտինգներին։ Բանվորական շարժման մասին ռեֆերատներ է կարդում, մերկացնում է հայ ուսանողության շրջանում քայքայիչ աշխատանք տանող բուրժուա-նացիոնալիստական տարրերին։

1903 թ. գերմանական սոցիալ-դեմոկրատիայի Դրեզդենի համագումարի շրջանում չափավորների և ռևոլյուցիոն թևերի միջև տեղի ունեցած սուր պայքարի ընթացքում Շահումյանը պաշտպանելով Բեբելի գլխավորած ռևոլյուցիոն թևի սկզբունքները՝ մերկացնում է Բերնշտայնի և Ֆոլմարի համաձայնողական ռեֆորմիստական, ռեֆորմիստական վարքագիծը։

Բեռլինում Շահումյանն «Ամբողջ ժամանակ շրջում է էմիգրանտ ռևոլյուցիոներների շրջանումն, տեղեկացնում էր ցարական ագենտուրան։ Պարտիայի հնագույն անդամներից Լյադովը, որը պարտիայի հանձնարարությամբ պարապում էր իսկրայական ուսանողների Բեռլինի խմբակի հետ, Շահումյանի մասին գրում է հետևյալը. «... Հենց առաջին ժողովում ես ուշք դարձրի երիտասարդ ուսանողներից մեկի վրա։ Նա աչքի էր ընկնում թե իր արտաքին տեսքով—գեղեցիկ արտահայտիչ դեմքով և թե իր յուրջ, խորամիտ վերաբերմունքով դեպի արծարծվող հարցերը։ Խմբակի բոլոր անդամներն իրենց Իսկրովեց էին համարում, սակայն թերևս միայն Ստեփանն էր, որ ոչ միայն համարում էր իրեն, այլև իսկապես էր այդ ժամանակ Իսկրովեց, այսինքն՝ ռևոլյուցիոն մարքսիստ, կատարելապես կազմակերպված և մինչև վերջը մտածված աշխարհայացքով»։

Վ. Ի. Լենինը այդ շրջանից Ստեփան Շահումյանին արդեն գիտեր որպես կայուն իսկրականի, իսկ Շահումյանը, որը գլխնգլուխ կարդում էր «Իսկրա»-ի ամեն մի համարը, Լենինի աշխատությունները, օր-օրին ավելի ու ավելի էր հիանում Լենինի տիտանական մեծությամբ, ամեն կերպ ձգտում էր անձամբ ծանոթանալ նրա հետ։

Շահումյանի այդ ցանկությունը շուտով կատարվում է։ 1903 թ. ապրիլին Լենինը և «Իսկրա»-ի խմբագրությունը Լոնդոնից տեղափոխվում են Ժընև (Շվեյցարիա)։ Օգտվելով առիթից՝ Շահումյանը մեկնում է Ժընև և առաջին անգամ 1903 թ. ապրիլին անձամբ հանդիպում և ծանոթանում է Վ. Ի. Լենինի հետ, արժանանում նրա հատուկ ուշադրությանը։

Շահումյանը Ժընևում ավելի մոտիկից տեսնելով Ռուսաստանի ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի հանճարեղ ստեղծողին, թեորիական մարքսիզմի տիտանին, մասսաների իսկական առաջնորդին՝ Վ. Ի. Լենինին առավել սերտ կապերով է կապվում նրա հետ։

1903 թ. հուլիսին տեղի է ունենում ՌՍԴԲՊ 2-րդ համագումարը. Շահումյանը անվերապահորեն կանգնում է Վ. Ի. Լենինի գլխավորած կայուն իսկրականների—բոլշևիկների դրոշի տակ, դառնում է բոլշևիկ և իր ամբողջ կյանքում հավատարիմ մնում Լենինի մեծ գործին։

«Ընկեր Շահումյանին (Ստեփանին),—գրում է Ն. Կ. Կրուպսկայան,—մենք վաղուց էինք ճանաչում։ Երկրորդ համագումարից անմիջապես հետո նա հարեց բոլշևիկներին»[2]։

---

[1] Տես Մ. Լյադովի «Հնում անցյալից» հուշերը, ՄԷԼՍԻ հայկական ֆիլիալի արխիվ։ Փ. 7։

[2] Ն. Կ. Կրուպսկայա. Հիշողություններ, Մոսկվա, 1933, էջ 508։

Երկրորդ համագումարից հետո Ժընևը, որտեղ ապրում էր Վ. Ի. Լենինը և որտեղ գտնվում էին պարտիայի ղեկավար օրգանները, դառնում է սոցիալ-դեմոկրատների արտասահմանյան աշխույժ կենտրոններից մեկը։

Այդտեղից Վ. Ի. Լենինը բազմաթիվ թելերով կապվելով Ռուսաստանում գործող պարտիական կազմակերպությունների հետ, լարված պայքար է տանում ՌՍԴԲՊ մեջ եղած պառակտումը սանձահարելու, մենշևիկների իդեական և կազմակերպական օպորտունիզմը մերկացնելու և 3-րդ համագումար հրավիրելու համար, մոտեցող ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի մեջ պարտիայի տակտիկական գիծը մշակելու համար։

Լենինի դիրեկտիվներով Շահումյանը Ժընևում և Բեռլինում ակտիվ կերպով մասնակցում է ներպարտիական պայքարին։

Կենտրոնական օրգան «Իսկրա» թերթը մենշևիկների կողմից զավթելուց հետո բոլշևիկների համար շատ խոշոր նշանակություն է ստանում պարտիական գրականության հրատարակման գործը։

Լենինը 1903 թ. վերջերից, 1904 թ. սկզբներից կազմակերպելով ԿԿ-ի պարտիական հրատարակչության գործը, նրան կից ստեղծում է նաև «Վրացերեն և հայերեն լեզվով պարտիական սոցիալ-դեմոկրատական գրականություն հրատարակող մասնաժողով», որի պարտականությունն էր հրատարակել անլեզալ գրականություն, ներպարտիական պայքարի խնդիրներին նվիրված բրոշյուրներ և դրանք տարածել Ռուսաստանում, Անդրկովկասում։

Այդ «մասնաժողովում» հայերեն հրատարակությունների գծով աշխատելու համար Վ. Ի. Լենինը կոպտացիայի է ենթարկում կայուն բոլշևիկ Ստեփան Շահումյանին, որը Լենինի անմիջական ղեկավարությամբ, կատարում է թարգմանական—խմբագրական և հրատարակչական բոլոր աշխատանքները։ Նրա այդ շրջանի կարևոր աշխատանքներից մեկն է լինում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի հայերեն լրիվ թարգմանությունը, որը լույս է տեսնում 1904 թ. օգոստոսին և հանդիսացավ նշանակալից երևույթ՝ հայերեն լեզվով մարքսիստական գրականության հրատարակման պատմության մեջ։

1903—1904 թթ. «Մանիֆեստ»-ից բացի հայերեն լեզվով լույս ընծայվեցին տասնյակ բրոշյուրներ և գրքույկներ՝ «Սահմանադրության էությունը», «ՌՍԴԲՊ երկրորդ հերթական համագումարի ընդունած ծրագիրը» և այլն։

Հրատարակչական աշխատանքների հետ միասին՝ Շահումյանը օգտվելով Լենինի ամենօրյա ցուցումներից, գաղափարական համառ պայքար է մղում արտասահմանում հրատարակվող դաշնակցական «Դրոշակ» թերթի և նրա շուրջը հավաքված մարդկանց, ինչպես նաև նորաթուխ սպեցեֆիկների դեմ։

«Ազգային այդ ճահիճը»—ինչպես անվանում էր նրանց Շահումյանը, ամեն կերպ ձգտում էր խցկվել Անդրկովկասի բանվորական շարժման մեջ և հայ բուրժուազիայի պատվերով պառակտել, շեղել հայ բանվորներին դասակարգային պայքարից, կտրել նրան ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունից, համառուսական ռևոլյուցիոն շարժումից։

Լենինը սովորեցնում էր Շահումյանին և մյուս բոլշևիկներին անողոք և անզիջող լինել բուրժուական նացիոնալիստների նկատմամբ։

1905 թ. սեպտեմբերի 7-ին Պենտկոմի անդամներին գրած իր նամակներից մեկում Լենինը զգուշացնում էր ընկերներին թույլ չտալ Ռուսաստանում աշխատող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների Ռիգայում հրավիրվող կոնֆերանսին մասնակցելու «Հայկական Սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիային» (սպեցիֆիկներին — Ե. Խ.)։ Դրանք «ժիրենյան մի զույգ կազմալուծիչներ են,— գրում է Լենինը,— որոնք Կովկասի հետ ոչ մի լուրջ կապ չունենալով, այստեղ հրատարակում են ամենադատարկ բաներ։ Դա բունտական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, հատկապես մտածված՝ կովկասյան բունտիզմ սնելու համար... Կովկասյան բոլոր ընկերները դեմ են այդ գրականագետ—քայքայիչ շայկային (այս ես գիտեմ շատերից)»[1]։ Այդ շատերից առաջինը Ստեփան Շահումյանն էր, որը Լենինի, Ստալինի հետ միասին խորտակիչ հարվածներ հասցրեց սպեցիֆիկներին՝ նրանց ասպարեզ գալու առաջին իսկ օրերից, մինչև նրանց կատարյալ կազմալուծումը։

Լարված աշխատանքի հետևանքով՝ Շահումյանը 1904 թ. գարնանից հիվանդանում է նևրաստենիայով և ծայր աստիճան հյուծվում, Իժիչկների խորհրդով և Լենինի հորդորանքներով, նա կարճ ժամանակով վերադառնում է Կովկաս՝ կազդուրվելու։

Լենինը նրան պարտիական մի շարք հանձնարարություններ է անում։ Թիֆլիս հասնելով, նա իր առաջին պարտականությունն է համարում կատարել Լենինի հանձնարարությունը, Կովկասյան միության կոմիտեի Նիստում զեկուցում է ներպարտիական գրության մասին, Լենինի պայքարը պարտիական պառակտումը հաղթահարելու, 3-րդ համագումար հրավիրելու ուղղությամբ։

Շահումյանին խիստ ուրախացնում է Կովկասյան բոլշևիկների արդյունավետ աշխատանքը։ Նա, երկու ժամ զեկուցելուց հետո, ընկերներին հայտնում է, որ ինքը միանգամայն բավարարված և առույգ է զգում իրեն։

Կովկասյան միության կոմիտեի անդամները՝ Մ. Ցխակայան և մյուսները, խնդրում են Շահումյանին աշխատել Անդրկովկասում։ Շահումյանը ընկերներին պատասխանում է. «Միայն թե առաջ պիտի վերադառնամ Իլյիչի մոտ, չէ՞ որ պարտավոր եմ նրան էլ իրազեկ դարձնել, թե որպիսի աշխատանք է եռում ձեզ մոտ։ Նա ամբողջովին կթնավորվի որպես լեռնային արծիվ և կճախրի ձեզ վրա, Կովկասի վրա»[2]։

Շահումյանը մի առ ժամանակ հանգստանում է Ջալալ-Օղլում (այժմ Ստեփանավան)։ Այնտեղ նա, դեռ մի քանի տարի առաջ իր հիմնած մարքսիստական սոցիալ-դեմոկրատական խմբակի անդամների հետ ջերմ հանդիպումներ է ունենում, նրանց պատմում է Լենինի մասին, մոտեցող ռևոլյուցիայի մասին սոցիալ-դեմոկրատների խնդիրների մասին։ 1904 թ. ամռանը Շահումյանը դարձյալ մեկնում է արտասահման։ Դեռ գարնանից

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 496—497 (ռուս. 3-րդ հրատ.)։

[2] Տես Մ. Ցխակայայի «Անմոռանալի բարեկամ — ընկեր Ստեփան Շահումյանի հիշատակին» հոդվածը, ՄԷԱՄ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7։

հրատարակչության գծով սկսած աշխատանքները ավարտելուց հետո նա նոր եռանդով շարունակում է իր ուսումնական գործը։

Հենց այդ թվականին էլ նա ավարտում է համալսարանական դասընթացը, ստանում է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան։

Զբաղվելով իր ուսման աշխատանքով, Շահումյանը երբեք չէր կտրվում Լենինից և պարտիական աշխատանքներից։ Նա հաճախ Իեռլինից ժընև էր մեկնում, անձամբ հանդիպում էր Լենինին և կամ նամակագրությամբ կապ էր պահպանում նրա հետ։

Այդ շրջանից մեզ հասել է մի ուշագրավ նամակ՝ 1904 թ. նոյեմբերի 28-ին Բեռլինից Շահումյանի կողմից ժընև՝ Լենինին ուղղված նամակը, որն սկսվում է «Մեծարգո Վլադիմիր Իլյիչ» բառերով։

Շահումյանը իր նամակով շտապում է կատարել Պետերբուրգի մի խումբ հայ ուսանողների հանձնարարությունը, որոնք որոշել էին հրատարակել մարքսիստական հայերեն լեզվով մի լեգալ ժողովածու։

«Խումբը հանձնարարում է ինձ, — գրում է Շահումյանը Լենինին,— խնդրելու նաև Ձեզ և Պլեխանովին մասնակցելու ժողովածուին, եթե դուք ժամանակ կգտնեք։ Ձեռնարկության գլուխը կանգնած է անձնապես ինձ լավ ծանոթ մի ընկեր, որը անցյալ տարի աշխատել է Թիֆլիսի Կոմիտեում («ժիզնականներից» է)։

Խնդրում եմ Ձեզ, եթե ժամանակներդ կների կամ եթե որևէ պատրաստ բան ունեք, չմերժել։ Այդ հրատարակությունից գոնձված միջոցներն անտարակույս կգնան պարտիայի օգտին և, որ ամենագլխավորն է, այն դեպքում, եթե հրատարակությունն իրականացվի այն ձևով, ինչպես մտադրված է, հսկայական նշանակություն կունենա հայ ընթերցողների համար, մանավանդ մի բավականին բազմամարդ խավի համար մեր միջին ինտելիգենցիայի, որից հավաքագրվում են այժմ մեր պրոպագանդիստները։ Այդ՝ միջնակարգ հոգևոր ուսումնական հաստատությունների դասընթաց ավարտածներն են, որոնք ռուսերեն չգիտեն։

... Պատասխանի սպասելով՝ բարևներով ու լավագույն մաղթություններով՝ Ձեզ նվիրված Ս. Շահումյան»[1]։

Այս նամակի արժանիքները մեծ են։ Նախ նամակից երևում է Շահումյանի նվիրվածությունը և նրա սերտ կապը Լենինի հետ։ Պարզվում է, որ հայկական շրջանները արդեն այդ ժամանակ հանձին Շահումյանի, ճանաչում էին Լենինի ամենամերձավոր և վստահված աշակերտներից մեկին։ Միաժամանակ երևում է Շահումյանի բացառիկ հոգատարությունը մարքսիստական-լենինյան գաղափարները հայկական շրջաններում տարածելու սոցիալ-դեմոկրատական հայկական կադրեր դաստիարակելու ուղղությամբ։

Ռուսաստանում ծավալվող ռևոլյուցիան Շահումյանին մագնիսական ուժով ձգում է դեպի իրեն։ 1905 թ. գարնանից նա պարտիայի կամքով վերջնականապես վերադառնում է Անդրկովկաս։ Ավարտվում է Լենինի հետ նրա աշխատանքի ու հանդիպումների առաջին շրջանը։

---

[1] Ստ. Շահումյան. Հոդվածներ և ճառեր, Երևան, 1933, էջ 7—8։

1904—1906 թթ. Շահումյանը Թիֆլիսում աշխատում է որպես Կովկասյան Միության Կոմիտեի անդամ, Ի. Վ. Ստալինի, Օրջոնիկիձեի հետ միասին խմբագրում է ՌՍԴԲՊ Կովկասյան Միության անլեգալ օրգան «Պրոլետարիատի կոիվը» թերթը։

Շահումյանը Կովկասյան Միության Կոմիտեի ղեկավարությամբ հայերեն լեզվով թարգմանում և բոլշևիկյան անլեգալ և լեգալ թերթերի էջերում մասսայականացնում է Լենինի, Ստալինի աշխատությունները, հայ պրոլետարիատին զինում է լենինիզմի ամենահաղթ գաղափարներով։

Միայն 1905 թ. ընթացքում Շահումյանի ամենաեռանդուն մասնակցությամբ հայերեն լեզվով լույս տեսան Լենինի՝ «Պրոլետարիատի և գյուղացիության սոցիալիստական-դեմոկրատական դիկտատուրան», «Մայիսի մեկը», «Երրորդ համագումարը», «Բանաձևի նախագիծ Կովկասի իրադարձությունների մասին», «Սոցիալիստական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները», «Երեք կոնստիտուցիա կամ պետական կառուցվածքի երեք կարգ» և ուրիշ աշխատություններ։ Այդ աշխատությունները լայնորեն տարածվեցին հայ աշխատավորության շրջաններում։

Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինին երկրորդ անգամ հանդիպում է 1906թ. ապրիլին Ստոկհոլմում, ՌՍԴԲՊ 4-րդ համագումարում, ուր նա դելեգատ էր գնացել Երևանի կազմակերպության կողմից։

Համագումարում Շահումյանը մանդատային հանձնաժողովի անդամ էր. նա համառ պայքարով պաշտպանեց բոլշևիկյան բոլոր մանդատները, որոնց դեմ պրովոկացիոն բացարկ էին ներկայացնում համագումարում մեծամասնություն կազմող մենշևիկները։ Շահումյանը Լենինի և Ստալինի հետ միասին պաշտպանեց բոլշևիկյան գիծը՝ ընդդեմ մենշևիկների։ Նա Լենինից սովորեց չհուսահատվել անհաջողության դեպքում, ատել նվնվացողներին, հակառակորդին ջախջախելու համար աներեր վստահություն և հավատ ունենալ դեպի իր սեփական բոլշևիկյան ուժերը։

Համագումարից հետո Շահումյանը կրկին Անդրկովկասում է։ Նա Երևանում մի ամբողջ շաբաթ հաշվետու զեկուցում է կարդում պարտիայի 4-րդ համագումարի մասին՝ տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անլեգալ ժողովներում։ Այցելում է Տեր-Գարրիելովի կաշվի գործարանի բանվորներին, այնտեղ միտինգ է կազմակերպում։

Մասսայականացնելով լենինյան գաղափարները, նա անհաշտ պայքար է մղում մենշևիկների, սոցիալիստների և դաշնակների դեմ, հիմնովին ձևավորում և ամրապնդում է Երևանի բոլշևիկյան կազմակերպությունը, որի շարքերում էին գտնվում Ա. Մռավյանը, տպագրիչ բանվոր Լ. Յաղուբյանը, Բաքումի հին բանվորներից Մ. Միրաքյանը (Շանթ), Խարկովի Տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Ա. Մալխասյանը և ուրիշները։

Համագումարից վերադառնալուց հետո Շահումյանը առանձին թափով նվիրվում է բոլշևիկյան մամուլի ղեկավարմանը։ Նա 1905—1907 թվականների ընթացքում Թիֆլիսում և Բաքվում՝ Ի. Վ. Ստալինի, Օրջոնիկիձեի, Սպանդարյանի, Ֆիալետովի և մյուսների հետ միասին խմբագրում կամ աշխատակցում է ռուսերեն և հայերեն բոլշևիկյան տասնյակ թերթերի։

Այդ թերթերից են՝ «Կավկազսկի ռաբոչի լիստոկ», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր», «Բակինսկի պրոլետարի», «Գուդոկ», «Բակինսկի ռաբոչի» և այլն։

Այս թերթերի էջերից Անդրկովկասի բոլշևիկները ջախջախիչ հարվածներ հասցնելով բանվոր դասակարգի բոլոր թշնամիներին, պաշտպանում և պրոպագանդում էին մարքսիստական-լենինյան թեորիան և տակտիկան, եղբայրական համերաշխությամբ պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո համախմբելով ռուս, հայ, վրացի, ադրբեջանական բանվորներին և աշխատավորությանը, նրանք պայքարում էին զինված ապստամբության նախապատրաստման և անցկացման համար, ցարիզմի և բուրժուազիայի տապալման, դեմոկրատական ու սոցիալիստական կարգերի հաստատման համար։

Երրորդ անգամ Ստ. Շահումյանը Լենինին հանդիպում է 1907 թ. ապրիլ—մայիսին՝ Լոնդոնում ՌՍԴԲՊ-ի 5-րդ համագումարում։ Շահումյանը (Սուրենին) համագումարին դելեգատ էր գնացել Բորչալուի (Լոռի, Ալավերդի) բոլշևիկյան կազմակերպության կողմից։

Այս համագումարն ամրապնդեց բոլշևիկների հաղթանակը մենշևիկների դեմ։

Շահումյանը Անդրկովկասյան բոլշևիկ դելեգատների՝ Ստալինի (Իվանովիչ), Ցխակայայի (Բարսովի) հետ միասին, իր մի շարք ելույթներում ու գրավոր հայտարարություններում բացահայտում է մենշևիկների կեղծիքը, լիբերալ-բուրժուական էությունը։

Լենինն այս համագումարում բոլշևիկներին պատվիրեց՝ հաղթանակով չպարծենալ, լինել ավելի զգաստ և աչալուրջ, ամրապնդել ձեռք բերած հաղթանակը և հակառակորդին ջախջախել մինչև վերջը։ Լենինի գործունեության այս առանձնահատկությունները յուրացվեցին իր աշակերտների, մարտական զինակիցների, դրանց թվում՝ Շահումյանի կողմից, որոնք թշնամու դեմ պայքարում էին լենինյան հաստատակամությամբ ու վճռականությամբ։

1907 թ. ՌՍԴԲՊ 5-րդ համագումարից վերադառնալուց հետո, Ստեփան Շահումյանը պարտիայի կամքով Թիֆլիսից փոխադրվում է Բաքու, աշխատում է Բաքվի բոլշևիկյան կոմիտեի կազմում։ Որպես պատրաստված մարքսիստ և ռևոլյուցիոներ, նա Բաքվում տաղանդավոր կերպով դրսևորում է կազմակերպչական, պրոպագանդիստական, թեորետիկական ու հրապարակախոսական իր ընդունակությունները։

Շահումյանը ամբողջ 10 տարի այլևս չի կարողանում անձամբ հանդիպել իր ուսուցչի՝ Վ. Ի. Լենինի հետ, բայց տերիտորիալ հեռավորությունը չանջատեց նրանց։ Բաքվի Կոմիտեն այդ տարիներին իր կազմի մեջ էր համախմբել այնպիսի բոլշևիկ լենինյանների, ինչպես Բ. Վ. Ստալինին, Սարատովեցին, Վացեկին, Ստոպանին, Օրջոնիկիձեին, Սպանդարյանին, Ջափարիձեին, Փիալետովին, Ալիլուևին և ուրիշների, որոնք միասին կատարելով Լենինի ցուցումները, կազմակերպեցին Բաքվի բոլշևիկների հերոսական պայքարը մենշևիկների, դաշնակների, պանիսլամիստների դեմ, նրանք ջախջախիչ հարված հասցնելով այդ բոլորին, բոլշևիկների կողմը գրավեցին Բաքվի բազմազգ աշխատավորությանը։

Ցարական ռեակցիայի դժնդակ տարիներին, կիրառելով լեգալ և անլեգալ աշխատանքներին զուգակցելու լենինյան ճկուն գիծը, Բաքվի բոլշևիկները պահպանեցին պարտիական անլեգալ կազմակերպությունները, ցիկավարեցին և ուղղություն տվին Բաքվի պրոլետարիատի գործունեու-

ներին ու քաղաքական պայքարին, հրատարակեցին բոլշևիկյան լեգալ թերթեր, որոնց ձայնը ռեակցիայի մութ խավարում թնդում էր ամբողջ Ռուսաստանով մեկ։

Ռեակցիայի տարիներին Բաքուն դարձավ բոլշևիկյան անառիկ միջնաբերդ։ Բոլշևիկների ղեկավարությամբ, Բաքվի պրոլետարիատը լենինյան դրոշի շուրջը համախմբված, սևհարյուրակային տեռորի դեմ պայքարելով՝ քայլում էր համառուսական բանվորական շարժման առաջին շարքերում։

Լենինը շատ բարձր գնահատեց Բաքվի բոլշևիկների աշխատանքը։ Այդ գնահատականի մեջ իր արժանի բաժինն ուներ նաև Ստ. Շահումյանը, որը դարձավ Բաքվի պրոլետարիատի սիրելի ղեկավարներից մեկը։

Ռեակցիայի տարիներին, ինչպես հայտնի է, որպես անմիջական պարտիական անհետաձգելի խնդիր, օրակարգի մեջ է դրվում մարքսիզմ-լենինիզմի, բոլշևիզմի թեորիական հիմունքների պաշտպանությունը և զարգացումը, պայքարը լիկվիդատորության և օտզովիզմի դեմ։

Լենինի օրինակով, Լենինի աշակերտներն ու զինակիցները, նրանց թվում նաև Շահումյանը, մասնակցեց այդ մեծ պայքարին։ Լիկվիդատորության դեմ մղվող պայքարում և պարտիական շինարարության հարցերում ամբողջապես Լենինի կողմը լինելով, Շահումյանը 1908 թ. արտասահման Մ. Ցխակայային ուղարկած իր նամակում գրում էր. «Մենք համոզված ենք Իլյիչի գիրքի ճշտության մեջ», «մենք ամբողջովին Իլյիչի կողմն էինք»[1]։

Ջերմ ողջույններ հղելով Լենինին, Շահումյանը Ցխակայայից խնդրում է հասցե ուղարկել՝ Լենինի հետ նամակագրություն սկսելու համար։

1908—1913 թթ. Շահումյանը քաղաքական և թեորիական հարցերին նվիրված շատ հոդվածներ գրեց ուղղված լիկվիդատորների, բուրժուական-նացիոնալիստների դեմ։ Նրա խմբագրությամբ և նախաձեռնությամբ Բաքվում լույս տեսան „Волна“, „Современная жизнь“, «Նոր խոսք» մարքսիստական թերթերը։ Պարտիայի շարքերում, Ս. Օրջոնիկիձեի դիպուկ բնորոշմամբ ասած, նա արժանացավ «թեորետիկական մարքսիզմի ծանր հրետանի» պատվավոր կոչման։

1911 թ. մարտ—ապրիլին Շահումյանը փորձեր է կատարում դարձյալ անմիջական կապ հաստատել Լենինի հետ։ Լենինին դիմելով խնդրում է թղթակցել իր խմբագրությամբ Բաքվում լույս տեսնող „Современная жизнь“ թերթին։ Լենինը սիրով ընդունելով Շահումյանի առաջարկը, „Марксизм“ и „Наша заря“ խորագիրը կրող Լենինի հոդվածը հրապարակվում է „Современная жизнь“ թերթի 1911 թ. ապրիլի 22-ի № 8-ում Վ. Իլյին ստորագրությամբ։

Լենինը իր հոդվածում քննադատում է 1911 թ. Պետերբուրգում լույս տեսնող մենշևիկների „Наша заря“ լեգալ լիկվիդատորական թերթի 2—7 համարները, Պոտրեսովի, Բազարովի և մյուսների լիկվիդատորական հայացքները։ Լենինը խոստանում է իր հետագա հոդվածներում ավելի մանրամասն կանգ առնել այդ թերթի մեջ տպագրված համարների բովանդակության վրա։ Բայց այդ չի հաջողվում, 1911 թ. ապրիլի 22-ին (մայիսի 5-ին) ցարական կառավարությունը փակում է „Современная жизнь“ թերթը։

[1] „Правда“, № 286. октябрь 1953 г.

Շահումյանը չի հուսահատվում, շարունակում է լարված պարտիական աշխատանքը։ Նա օգոստոսին Բաքվի կազմակերպության կողմից ընտրվում է 6-րդ (Պրագայի) կոնֆերենցիան նախապատրաստող ռուսական կազմակերպական հանձնաժողովի անդամ և սեպտեմբերից Բաքվում մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին։

Ժանդարմերիան, որը Շահումյանին ուրակում էր որպես «Կովկասյան բոլշևիկների լիդեր» և որոնում էր նրան, 1911 թ. սեպտեմբերի 30-ին ձերբակալում է նրան և 5 տարի ժամկետով աքսորում Աստրախան։

Բայց ոչ աքսորը և ոչ էլ ոստիկանական խիստ հսկողությունը Շահումյանին չկարողացան կտրել պարտիական ռևոլյուցիոն աշխատանքներից, Վ. Ի. Լենինից։

1912 թ. պարտիայի և բանվոր դասակարգի կյանքում տեղի են ունենում նոր և խոշոր իրադարձություններ։ Համառուսաստանյան 6-րդ (Պրագայի) կոնֆերենցիան դուրս վռնդելով ՌՍԴԲԳ-ից մենշևիկ-լիկվիդատորներին, վերջնականապես ձևավորում է բոլշևիկներին որպես ինքնուրույն պարտիա։ Լենինի գլխավորությամբ հաղթանակ տարած բոլշևիկները ռևոլյուցիայի վերելքի հենց սկզբից անշեղորեն պայքար են ծավալում ցարիզմի տապալման, պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի համար։ Ռևոլյուցիոն շարժման նոր վերելքի հետ միասին 1912 թ. ապրիլի 22-ին (մայիսի 5-ին) բանվորների նախաձեռնությամբ Պետերբուրգում ծնունդ է առնում բոլշևիկյան ամենօրյա մասսայական «Պրավդա» թերթը, բոլշևիկները աշխույժ գործունեություն են ծավալում 4-րդ Պետական դումայի ընտրական կամպանիայում և այլն։

Այս բոլորը գործունեության մեծ հեռանկարներ են բաց անում աքսորավայրում գտնվող Շահումյանի համար։ Նա ամեն կերպ աշխատում է դուրս պրծնել ոստիկանության ճանկերից, մասնակցել ռևոլյուցիոն նոր վերելքին։ Աստրախանում նա ամրապնդում է տեղի պարտիական կազմակերպությունը, հանդիպումներ է ունենում բանվորների հետ, տեսական աշխատություններ և հոդվածներ է գրում բոլշևիկյան թերթերին, Լենինի հետ կապ հաստատելու միջոցներ է որոնում, որը և հաջողվում է նրան։

Ինչպես հայտնի է, 1912 թ. հունիսից Լենինը Փարիզից փոխադրվել էր Կրակով, Ռուսաստանին ավելի մոտ լինելու, ռևոլյուցիոն վերելքը գլխավորելու, դումայի բոլշևիկյան ֆրակցիայի և «Պրավդայի» աշխատանքները մոտիկից ղեկավարելու համար։

1913 թ. ապրիլին Շահումյանը Լենինի առաջարկով Աստրախանից անլեգալ կերպով անցնում է Պետերբուրգ «Պրավդա»-ում աշխատելու համար։ Այդ հանձնարարությունը ոգևորում է Շահումյանին, նա մասնակցում է մի քանի համարների խմբագրմանը, «Պրավդա»-ում հրատարակել է տալիս Աստրախանի բանվորների, սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ընդունած և իր կողմից գրված երկու բանաձևերը, որոնց մեջ բանվորները ողջունում են «Պրավդա»-ին և 4-րդ Պետական դումայի դեպուտատ բոլշևիկյան վեցյակի գործունեությունը։ Բայց շատ կարճ է տևում Շահումյանի աշխատանքը «Պրավդա»-ում, ոստիկանությունը իմանալով նրա տեղը, հետապնդում է նրան։ Շահումյանը ստիպված է լինում հեռանալ Պետերբուրգից և վերադառնալ Աստրախան։

Աստրախան հասնելուց հետո Շահումյանը նամակ է ստանում Լենինից և անմիջապես պատասխանում է։ 1913 թ. հունիսի 10-ին գրված Շահումյանի այդ նամակը բոնագրավվում է ժանդարմերիայի կողմից և չի ուղարկվում իր հասցեով։ Այն մեզ հասել է Աստրախանի նահանգային արխիվից։ Նամակում Շահումյանը գրում է. «Մեծարգո Վլադիմիր Իլյիչ։ ...Շատ շնորհակալ եմ ինձ հիշելու համար, այժմ ապրում եմ և աշխատում եմ Աստրախանից 20 կիլոմետր հեռավորության վրա, ինձ նամակ կարելի է ուղարկել միևնույն հասցեով և նույն եղանակով։ Պետերբուրգում տեղավորվելու և օգտակար լինելու իմ անհաջող փորձի մասին Դուք... արդեն գիտեք»։

Նամակում Շահումյանը Լենինին տեղեկացնում է Աստրախանի պարտիական աշխատանքների մասին, Պետերբուրգում դումայի ընտրությունների ժամանակ բանվոր պրավդիստների հաջողությունների մասին և այլն։ Նամակն ավարտվում է հետևյալ խոսքերով՝ «Հղում եմ Ձեզ և Նադեժդա Կոստանտինովնային ու մյուս բարեկամներին բարևներ և լավագույն ցանկություններ»[1]։

1913 թ. Վ. Ի. Լենինի և Ս. Շահումյանի միջև սկսվում է աշխույժ նամակագրության մի նոր շրջան, գլխավորապես նվիրված ազգային հարցին, որն այդ ժամանակամիջոցում խիստ հուզող հարցերից մեկն էր։

Սևհարյուրակային շովինիզմի լիբերալ բուրժուազիայի կողմից հրահրվող նացիոնալիստական տենդենցների ուժեղացման հետ մեկտեղ, ՌՍԴԲՊ ծրագրի դեմ՝ Երկրորդ ինտերնացիոնալի օպորտունիստական դիրքերից պավաճանական հարձակումներ էին կատարում բունդականները, լիկվիդատորները, Կովկասյան սոցիալ-ֆեդերալիստները, որոնք առաջադրել էին «Ազգային կուլտուրական ավտոնոմիա»-ի հակապրոլետարական, բուրժուա-նացիոնալիստական լոզունգը։ Անհրաժեշտ էր մասսաների մեջ պրոպագանդել ՌՍԴԲՊ ծրագրի՝ ազգային հարցի ռևոլյուցիոն դրույթները, ջախջախիչ հարված հասցնել «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի» ռեակցիոն տեսակետին։

1913 թ. ազգային հարցի վերաբերյալ „Просвещение", „Правда", „Социал-демократ" թերթերում հրապարակվեցին Լենինի գրած մի շարք աշխատությունները՝ «Բանվոր դասակարգը և ազգային հարցը», «Թեզիսներ ազգային հարցի մասին», 1913 թ. ամռանը՝ Կենտկոմի և պարտիական աշխատողների խորհրդակցության ընդունած՝ «Բանաձև ազգային հարցի մասին», «Կուլտուր-ազգային» ավտոնոմիայի մասին», «ՌՍԴԲՊ ազգային ծրագրի մասին» և այլն։

1913 թ. մարտ—ապրիլ ամիսներին լույս տեսավ Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և ազգային հարցը» աշխատությունը, որն արժանացավ Լենինի բարձր գնահատականին։

Բոլշևիկները, ջախջախելով Երկրորդ ինտերնացիոնալի օպորտունիստական հայացքներն ու դոգմաներն ազգային հարցի վերաբերյալ, հիմնավորելով բանվորների ինտերնացիոնալ համախմբման սկզբունքը՝ մշակեցին ազգային հարցի մարքսիստական թեորիան ու ծրագիրը, փայլուն կերպով մեկնաբանեցին ազգային հարցի լուծման հիմունքները, ազգային հար-

[1] ՏԻՍ ՄԼԿՍԻ հայկական ֆիլիալի արխիվ։ Ս. Շահումյանի ֆոնդը։

ցը գիտելով, որպես ռևոլյուցիայի ընդհանուր հարցի մի մաս՝ անխզելիորեն կապված իմպերիալիզմի գարաշրջանի ամբողջ միջազգային իրադրության հետ։

Այդ տարիներին Վ. Ի. Լենինը Ստ. Շահումյանին նույնպես հրավիրում է մասնակցելու ազգային հարցի մշակման աշխատանքներին, որպես ազգային հարցի մասնագետ բոլշևիկներից մեկի։

1913 թվականի օգոստոսի սկզբից Շահումյանը աքսորից նամակ է գրում Լենինին։ Լենինը օգոստոսի 24-ին անմիջապես պատասխանում է նրան և խնդրում է անպայման ավելի շատ նյութեր, վիճակագրական տվյալներ ուղարկել իրեն՝ ազգային հարցի մասին։ «Պարսկաստանում, Թյուրքիայում, և՛ Ռուսաստանում ազգությունների հարաբերությունների մասին, մի խոսքով՝ այն բոլորը, գրում է Լենինը,— ինչ կա ու ինչ հավաքել կարող եք, ուղարկեցեք։ Մի մոռացեք նույնպես փնտրել այնպիսի կովկասցի-ընկերներ, որոնք կարողանային Կովկասում ազգային հարցի մասին հոդվածներ գրել։

Ողջույն և հաջողության ցանկություն։

Ձեր Վ. Իլյին»[1]։

Աստրախանում եղած ժամանակ, Շահումյանը Լենինից ստանում է 1913 թ. կկ-ի անդամների և պարտիական աշխատողների Պորոնինոյի խորհրդակցության ընդունած բանաձևը՝ ազգային հարցի մասին։ Բանաձևը ուղարկվում էր աչքի ընկնող պարտիական գործիչներին և ազգային հարցով զբաղվող ընկերներին, նրանց կարծիքները և առաջարկությունները ստանալու համար, որպեսզի ազգային հարցի ծրագրի բարեփոխված, ճշգրտված նախագիծ մշակվեր, առաջիկա պարտիական համագումարում քննության առնելու համար։

Բանաձևի հետ ծանոթանալուց հետո, 1913 թ. նոյեմբերի 15-ին Շահումյանը ընդարձակ մի նամակ է ուղարկում Լենինին, շոշափելով պետական լեզվի, ֆեդերացիայի, ավտոնոմիայի հարցերը և այլն։ 1913 թ. դեկտեմբերի 6-ին Լենինը ամենայն մանրամասնությամբ, կետ առ կետ քննելով և պատասխանելով Շահումյանի նամակում շոշափված հարցերը, բարեկամաբար, չափազանց կարևոր ուղղումներ է անում, օգնում է Շահումյանին ճիշտ ըմբռնելու և մեկնաբանելու ազգային հարցի բոլշևիկյան ծրագրի առաջադրանքները, ճշտորեն կիրառելու այն Ռուսաստանի պայմաններում։

«Թանկագին բարեկամ, գրում է Լենինը Շահումյանին,— շատ ուրախ եղա նոյեմբերի 15-ի թվակիր Ձեր նամակի համար։ Դուք պիտի իմանաք, որ իմ վիճակում մարդ անչափ գնահատում է Ռուսաստանի ընկերների, մանավանդ խոհուն և տվյալ հարցով զբաղվող ընկերների կարծիքները։ Ձեր արագ արձագանքելը այս պատճառով ինձ համար առանձնապես հաճելի էր»։

Նամակի մնացած մեծ մասում քննադատաբար վերլուծելով Շահումյանի առաջադրած հարցերը, Լենինը, նամակի վերջում, հայտնում է, որ

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 104։
[2] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 19, էջ 623 և 626։

այդ հարցերի վերաբերյալ ինքը գրում է հոդվածներ, որոնք տպագրվելու են „Просвещение" ժուռնալում. «Ես անպատճառ ավելի մանրամասն գրեցեք,—պատվիրում է Լենինը Շահումյանին,—երբ ես վերջացնեմ այդ հոդվածները (կլինեն 3 գրքում), էլի որևէ բան կուղարկեմ։ Բանաձևն անցկացնողն ամենից ավելի իսկապես ես եմ եղել։ Ամառը ազգային հարցի վերաբերմամբ ռեֆերատներ եմ կարդացել և մի փոքր ուսումնասիրել եմ այն։ Այս պատճառով մտադիր եմ «հաստատուն լինելց, թեև. իհարկե, ich lasse mich belehren[1] այն ընկերների, որոնք ավելի շատ ու ավելի երկար են ուսումնասիրել հարցը...»

... Թող այժմ խոխեն իրենց քիթը օպորտունիստական (բունդական, լիկվիդատորական, նարոդնիկական) սինլբորները—թող տան իրենց նույնչափ ճշգրիտ և նույնչափ լիակատար պատասխանները բոլոր մեր այն հարցերին, որ շոշափված ու վճռված են մեր բանաձևում։ Թող մի փորձեն։ Ոչ, օպորտունիստների առաջ մենք չզիջեցի՞նք, այլ նրանց ջախջախեցինք բոլոր կետերում»[2].

1914 թվականի ոկզբներին Շահումյանը աքսորից վերադառնում է Բաքու, գլխավորում է պարտիական աշխատանքները, Բաքվի կոմիտեի ստեղծած գործադուլային կոմիտեի միջոցով ղեկավարում է նավթարդյունաբերության բանվորների 1914 թ. հունիսի վիթխարի գործադուլը։ Տաղանդավոր կերպով զուգակցելով թեորիական աշխատանքները պրակտիկ ռևոլյուցիոն գործունեության հետ, նա Բաքվում լույս է ընծայում, դեռևս աքսորում գրած «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին» իր հայտնի աշխատությունը, ուղղված հայ սպեցիֆիկների լիգերներից Դավիթ Անանունի «Ազգային հարցը ու դեմոկրատիան» հոդվածի դեմ։ Անանունը իր այդ հոդվածով հանդես էր եկել «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի» բուրժուա-նացիոնալիստական պահանջով՝ ընդդեմ ազգային հարցի մարքսիստական ծրագրի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների։

Շահումյանն իր աշխատությամբ մարքս-լենինյան դիրքերից ջախջախիչ հարված է հասցնում սոցիալ-շովինիստներին, կրքոտությամբ պաշտպանում և հիմնավորում է պրոլետարական ռևոլյուցիայի և նրան ենթակա ազգային հարցի մարքսիստական թեորիան, բանվորներին և գյուղացիներին դաստիարակում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, եղբայրական համերաշխությամբ նրանց համախմբում է բոլշևիկյան դրոշի ներքո։

1914 թ. ապրիլի 17-ին Շահումյանը Բաքվից նամակ է գրում Լենինին. «Շատ հարգելի և սիրելի Վլադիմիր Իլյիչ,—գրում է նա,—շատ ներողություն եմ խնդրում երկար լռության համար։ ...Ահա ես արդեն մեկ ամսից ավելի է ինչ, կովկասում եմ—մեկ Թիֆլիսում, մեկ Բաքվում։ Այժմ ես վերջնականապես տեղավորվել եմ այստեղ՝ Բաքվում։ Համարյա բոլորի հետ, ում հետ կարելի էր, տեսնվել եմ...»[3]։ Այնուհետև հայտնում է «Ազգային կուլտուրական ավտոնոմիայի» դեմ հայերեն լեզվով իր բրոշյուրի հրատարակման անհրաժեշտության մասին, շեշտելով որ Ա-Նի ելույթից հետո Կովկասում այդ պահանջը շատ ընդհանուր էր դարձել։

[1] Ես կլսեմ արտահայտած կարծիքդ (ծանոթ. Լենինի Երկեր, խմբ.)։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ 19, էջ. 020։
[3] ՏԵՍ ՄԷԼՍԻ արխիվ Ստ. Շահումյանի ֆոնդը։

Վ. Ի. Լենինը նույն թվականի մայիսի 19-ին Պորոնինո գյուղից Շահումյանին պատասխանում է հետևյալ նամակով.

«Թանկագին Սուրեն, Ստացա Ձեր 17 ապրիլի նամակը։ Հույսով եմ, որ կպատասխանեք ինձ, թե երբ եք կարդալու ազգերի ինքնորոշման վերաբերյալ հոդվածի վերջը (այն գրում եմ այժմ) „Просвещение"-ում.

Ան-ի դեմ Ձեր բրոշյուրի մասին „Просвещение"-ում անպայման տվեք Selbstanreise (հաղորդում-հեղինակից — Ե Խ.) կամ շարադրանքը։

Ձեզ առաջարկում եմ հետևյալ պլանը ևս. «Կուլտուր-ազգային ավտոնոմիստներից հիմարության դեմ պայքարելու համար հարկավոր է, որպեսզի Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական ֆրակցիան օրենքի նախագիծ մտցնի Պետական դումա, ազգերի իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին։

Եկեք գրենք այսպիսի նախագիծ...

Անմիջապես գրեցեք, թե համաձայն եք արդյոք օգնելու։ Ընդհանրապես հաճախակի գրեցեք, ոչ պակաս շաբաթը մեկ անգամ։ Անթույլատրելի է երկար ժամանակով չպատասխանելը, նկատի ունեցեք այդ։ հատկապես այժմ։

Սեղմում եմ Ձեր ձեռքը։ Ձեր Վ. Ի.»[1]:

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի տարիներին Շահումյանը գլխավորում է Բաքվի պրոլետարիատի ռևոլյուցիոն գործադուլային շարժումները։ Պատերազմի, խաղաղության և ռևոլյուցիայի հարցերում անշեղորեն ղեկավարվելով Վ. Ի. Լենինի հայտնի թեզիսներով, որը Շահումյանը ստացել էր դեռևս 1915 թ., նա հետևողական պայքար է մղում իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լենինյան լոզունգի համար, Ռուսաստանում իմպերիալիստների իշխանությունը տապալելու, բոլոր երկրներում իմպերիալիստական պատերազմի դեմ մղվող պայքարը պաշտպանելու ուղղությամբ։

Շահումյանի նամակագրությունները Վ. Ի. Լենինի հետ շարունակվում էին նաև իմպերիալիստական պատերազմի տարիներին։ Արհամարհելով ժանդարմերիայի և գրաքննության կատաղի հետապնդումները. Շահումյանը կարողանում է կապ պահպանել բոլշևիկյան կենտրոնի և նրա ղեկավար Վ. Ի. Լենինի հետ, ժամանակին տեղյակ պահելով նրանց Կովկասի գրության մասին, ստանում է ցուցումներ։

1915 թ. հոկտեմբերի սկզբներին Շահումյանի ղեկավարությամբ Բաքվում գումարվում է Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների կոնֆերանսը, որտեղ Շահումյանը հանդես է գալիս «Ընթացիկ մոմենտի մասին» ծավալուն զեկուցումով։

Կոնֆերանսը հավանություն է տալիս Լենինի թեզիսներին, մշակում է Անդրկովկասի իրադրության համապատասխան ինտերնացիոնալիստական ռևոլյուցիոն գիծը, ընտրում է ՌՍԴԲՊ Կովկասյան բոլշևիկյան բյուրո, Ստ. Շահումյանի նախագահությամբ։ Նոյեմբերի 1-ին Շահումյանը Լենինին և Կրուպսկայային ուղարկում նոր ծածկագիր նամակում,

[1] Վ. Ի. Լենին։ Երկեր։ հատ. 35, էջ 140-141։

որտեղ Լենինին անվանում է «հորեղբայր», Կրուպսկայային «հորեղբորաքին», մանրամասն տեղեկացնում է կոնֆերանսի որոշումների և Անդրկովկասում տարվող աշխատանքների մասին։

«Ինձ հիշելու և նամակի համար շատ շնորհակալ եմ Ձեզանից,— գրում է Շահումյանը իր նամակում։— Ձեր նամակները, խորհուրդները և ցուցումները ինձ համար միշտ ամեն բանից թանկ են եղել, ...Դուք ուզում եք իմանալ, թե ես ինչ եմ մտածում և ինչ եմ անում։ Կարծեմ, այս անգամ էլ ձեզ հետ միանման եմ մտածում,—(խոսքը պատերազմի, խաղաղության և ռևոլյուցիայի հարցերի մասին է—Ե. Խ.) և երբ առաջին անգամ ստացա դրա հաստատումը (մոտ մի տարի սրանից առաջ), շատ երջանիկ զգացի ինձ։

... Ես և մեր բոլոր ազգականները (բոլշևիկները) բարձր ենք պահում մեր ընտանեկան (բոլշևիկյան պարտիայի) դրոշակը և որ Դուք կարող եք մեր ռեպուտացիայի համարհանգիստ լինել...

... Սրտագին բարևներով ու լավագույն ցանկություններով՝

Ձեր Ստ. . . »[1]։

Ցարական պահնորդական բաժանմունքը, որը ժանդարմերիայի միջոցով կատաղորեն հետապնդում և փնտրում էր Շահումյանին, 1916 թ. բռնում է Շահումյանի՝ Լենինին գրած մի ուրիշ նամակը և լրտեսների միջոցով ստույգ տեղեկություններ է ձեռք բերում Շահումյանի գործունեության և վերջին կոնֆերանսի մասին։ Այդ առթիվ տեղի ունեցած ժանդարմական գրագրությունների մեջ հայտնվում է, որ կոնֆերենցիայի բանաձևը կազմել է բոլշևիկ լենինյանների «պարտվողականներից» կազմակերպության ղեկավար Ստեփան Շահումյանը—կեղծ անունը «Սուրենին»։

«Գործակալության վերջին տեղեկությունների համաձայն, Շահումյանը համարվում է Կովկասի ամենազարգացած և ամենափորձված պարտիական աշխատողներից մեկը, որի հետ կապվում են բոլոր ռայոնները՝ արտասահմանում ապրող պարտիական անձերը։ Նա համոզված բոլշևիկ է և հայտնի Լենինի կողմնակիցը... գործակալության կարծիքով նրա հեռացումը Կովկասից հանգստություն կմտցնի ոչ միայն տեղական կյանքում, այլև ընդհանրապես Կովկասյան երկրամասում...»[2]։

1916 թ. մարտ ամսին ժանդարմերիան Գրոզնի քաղաքում Շահումյանին ձերբակալում է և ուժեղացրած պահակախմբով բերում է Բաքու։ 10 ամիս Բաքվի Բայիլովի բանտում պահելուց հետո Կովկասյան փոխարքայի դրասենյակի հատուկ բաժնի կարգադրությամբ նրան աքսորում են Սարատով։

Մի առ ժամանակ ընդհատվում է Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի նամակագրությունը։

1917 թ. փետրվարյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո Շահումյանը աքսորից վերադառնում է Բաքու, դեռ ճանապարհին տեղեկություն է ստանում, որ Բաքվի պրոլետարիատը իրեն ընտրել է Բաքվի բանվորների, զինվորների դեպուտատների սովետի նախագահ։

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Հայպետհրատ, Երևան, 1948, էջ 421—423։

[2] ՏԵՍ ՄԼԿՍԻ-ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7, գործ 57։

Ղեկավարվելով Լենինի Ապրիլյան թեզիսներով և պարտիայի ապրիլյան կոնֆերանսի որոշումներով, Շահումյանը իր շուրջը համախմբելով կայուն ու փորձված լենինյաններին՝ Ա. Ջափարիձեին, Մ. Ազիզբեկովին, Վ. Ֆիալետովին, Ա. Միկոյանին, Մալեգինին, Կորգանովին և մյուսներին՝ գլխավորում է Բաքվի և Անդրկովկասի բոլշևիկների պայքարը հանուն բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի վերաճմանը սոցիալիստականի։

1917 թ. հունիսին Շահումյանը մեկնում է Պետերբուրգ և մասնակցում է համառուսական Սովետների առաջին համագումարին, որպես Բաքվի դելեգատ։ Տաս տարվա ընդմիջումից հետո, համառուսական Սովետների առաջին համագումարում, նա մեծ հրճվանքով դարձյալ հանդիպում է իր ուսուցչին, պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինին։ Այդ հանդիպման մասին Նադեժդա Կոնստանտինովնան (Կրուպսկայան) գրում է.

«Ընկեր Շահումյանին, «Ստեփանին», որը ահագին ազդեցություն ուներ Բաքվի պրոլետարիատի վրա, մենք վաղուց էինք ճանաչում։

... Իլյիչը 1917 թվին ուրախ էր տեսնվելու Ստեփանի հետ և խոսելու ընդհուպ այն բոլոր խնդիրների մասին, որոնք այնպես հատու կերպով դառացել էին բոլշևիկների առաջ[1]։

«Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգը բոլշևիկներն առաջադրելով համագումարում, համախմբված Լենինի շուրջը, ջախջախիչ հարված էին հասցնում սովետում դեռևս մեծամասնություն կազմող մենշևիկներին, էսերներին, մերկացնում էին բուրժուազիայի հետ համաձայնության գալու, իմպերիալիստական պատերազմը շարունակելու նրանց վարքագիծը։

Համագումարում արտասանած իր փայլուն ճառում Լենինը ապացուցեց բոլշևիկների գծի ճիշտ լինելը։ Նա հայտարարեց, որ միայն Սովետական իշխանությունը կարող է հաց, հող ու խաղաղություն տալ բանվորներին և գյուղացիներին, բոլոր աշխատավորներին, միայն նա կարող է երկիրը դուրս բերել քայքայումից։

Շահումյանը համագումարում բոլշևիկյան ֆրակցիայի անունից հաշտության բանաձև առաջարկեց։ Նա ընտրվեց Համառուսական կենտգործկոմի անդամ։

Համագումարից հետո Շահումյանը մտերմական մթնոլորտում երկար զրույց է ունենում Լենինի և Ստալինի հետ պարտիական ռևոլյուցիոն աշխատանքների, կովկասյան գործերի մասին։

Այդ հանդիպումների կապակցությամբ Կրուպսկայան գրում է.

«Մենք երբեմն, թեև շատ հազիվ, գնում էինք զրոսնելու...

Մի անգամ հիշում եմ, գնացել էինք այս տեսակ զրոսանքի ընկ. Շահումյանի հետ։ Շահումյանն այդ ժամանակ Իլյիչին տվեց կարմիր նշաններ, որ խնդրել էին հանձնել Իլյիչին՝ նրա որդիները...»[2]։ Շահումյանը իր որդիներին գաստիարակում էր Լենինի գաղափարներով, Լենինի կերպարով։

Վ. Ի. Լենինի հետ Ստեփան Շահումյանի այս հանդիպումը եղավ վերջին անձնական հանդիպումը։

1917 թ. հուլիսին Պետրոգրադում գումարվում է ՌՍԴԲՊ 6-րդ համա-

---

[1] Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ, 1933 թ. էջ 508—510։

[2] Նույն տեղում։

գումարը, Շահումյանն ընտրվում է մեր պարտիայի՝ Լենինի գլխավորած Կենտրոնական Կոմիտեի անդամ։ Սեպտեմբերին Պետրոգրադ է կանչվում և մասնակցում է Կենտկոմի պատմական այն հայտնի նիստերին, ուր առաջին անգամ քննարկվում էին Վ. Ի. Լենինի նամակները զինված ապըստամբության մասին։

Շահումյանը հավատարիմ բոլշևիկյան Կենտրոնական կոմիտեի լենինյան դիրեկտիվներին, իր մարտական զինակիցների՝ Ջափարիձեի, Ազիզբեկովի, Ֆիալետովի, Կորգանովի, Միկոյանի և մյուսների հետ միասին պայքարում է Անդրկովկասում պրոլետարական ռևոլյուցիայի, սովետական կարգերի հաղթանակի համար։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո պայքարը Սովետական իշխանության համար Անդրկովկասում բորբոքվեց նոր և արտակարգ թափով։

1917 թ. դեկտեմբերին Լենինի առաջարկությամբ Սովետական կառավարությունը Համառուսաստանյան բոլշևիկյան Կենտրոնական կոմիտեի անդամ Ստ. Շահումյանին նշանակում է Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար։

Շահումյանի գլխավորած Բաքվի սովետը, ինչպես նաև Անդրկովկասի մի շարք վայրերի բանվորների, զինվորների, գյուղացիների դեպուտատների սովետները ջերմորեն ողջունեցին Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը, Լենինի գլխավորած Սովետական կենտրոնական կառավարությունը։

Հենվելով Բաքվի սովետի վրա, որն առաջինը բարձրացրեց Սովետական իշխանության դրոշն Անդրկովկասում՝ Շահումյանը Լենինի ցուցումով եռանդուն գործունեություն է ծավալում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի համար ամբողջ Կովկասում։

Որպես Կովկասյան գործերի Արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանի աշխատանքի արդյունքները անչափ ուրախացնում էին Վ. Ի. Լենինին։

19 8 թ. փետրվարի 14-ին Շահումյանին ուղարկված իր հեռագրում Վ. Ի. Լենինը գրում է՝

«Թանկագին ընկ. Շահումյան։

Շատ շնորհակալ եմ Նամակիդ համար։ Մենք հիացած ենք Ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությամբ։ Կարողացեք դրան միացնել այն ամենազգույշ դիվանագիտությունը, որը անպայմանորեն թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ, և մենք կհաղթենք»[1]։

1918 թ. մարտին քաղաքացիական համառ կռիվներում Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ ջախջախելով մուսավաթական կոնտրռևոլյուցիան, Բաքվում Սովետական իշխանություն է հաստատում։

Շահումյանը Լենինի և պարտիայի կամքով գլխավորում է Բաքվի սովետական իշխանությունը, տանում է ժողկոմսովետի նախագահի և Արտաքին գործերի կոմիսարի պարտականությունները։

Բաքվի Կոմունայի շրջանում Ստեփան Շահումյանի և Վ. Ի. Լենինի կապերը էլ ավելի ամրապնդվեցին և ստացան ամենօրյա բնույթ։

[1] Վ. Ի. ԼԵՆԻՆ, Երկեր, հատ. 35, էջ 359։

Լենինը և Ստալինը քաղաքացիական կռիվների դժվարին պայմաններում ամեն ջանք գործադրելով, նյութական և ռազմական օգնություն էին հասցնում Բաքվի Սովետական իշխանությանը, որը շրջապատված արտաքին ու ներքին թշնամիներով՝ հերոսական պայքար էր մղում Սովետական իշխանության ամրապնդման համար։

Այդ դժվարին օրերին Լենինը Բաքվի բոլշևիկների և անձամբ Շահումյանի հետ իր կապերը անխափան դարձնելու համար բազմաթիվ նամակներ—դիրեկտիվներով, հեռագիր—ռադիոգրամներով, ոգեշնչում, ցուցումներ էր տալիս նրան։

1918 թ. հուլիսի 29-ին Շահումյանին գրած այդ կարգի նամակներից մեկում նա գրում է.

«Թանկագին ընկ. Շահումյան։

Հղում եմ լավագույն ողջույններ և ցանկություններ։

Ստալինը Ցարիցինում է։ Ավելի լավ է նամակներն ուղարկեք Ստալինի միջոցով։

Ողջույն։

Ձեր Լենին»[1]։

Բայց, ինչպես հայտնի է, Բաքվի Կոմունային և Ստ. Շահումյանին չվիճակվեց երկար կյանք ունենալ։ Գերմանո-թյուրքական և ապա անգլիական ինտերվենտների գերազանց ուժերի ճնշման տակ, ներքին կոնտրռևոլյուցիայի դավաճանության հետևանքով, 1918 թ. հուլիս—օգոստոսին Բաքվի Կոմունան ժամանակավորապես ընկավ։ 1918 թ. օգոստոսի 9-ին Լենինը Բաքվից և Շահումյանից տեղեկություններ չունենալով, անհանգստացած, հեռագրում է Աստրախան սովդեպի նախագահին՝

«Դրությունը Բաքվում ինձ համար այնուամենայնիվ պարզ չէ։

Ո՞վ է կանգնած իշխանության գլուխ։

Որտե՞ղ է Շահումյանը։

Հարցում արեք Ստալինին և գործեցեք բոլոր հանգամանքները նկատի առնելով. Դուք գիտեք, որ ես լիովին վստահում եմ Շահումյանին։ Այստեղից չի կարելի հասկանալ դրությունը և արագ օգնելու հնարավորություն չկա։

Լենին»[2]։

Այս հեռագրում, ինչպես և 1918 թ. հուլիսի 29-ի Համառուսական ԿԴԿ նիստում արտասանած ճառում Լենինը արտահայտում է իր աներեր վստահությունը և հավատքը Ստեփան Շահումյանի և Բաքվի կոմիսարների վարքագծի վերաբերյալ։ Անգլիական իմպերիալիստներին Բաքու հրավիրելուց, ինտերվենտների և դավաճան մենշևիկների, էսերների, դաշնակների հետ գործակցելուց, կոմունարների հրաժարումը ռևոլյուցիոներներին վայել տակտիկա համարելով, Լենինն ասել է՝

«Կովկասի Արտակարգ կոմիսար ընկ. Շահումյանը, հենվելով Սովետների 3-րդ համագումարի բանաձևի և կենտրոնական Ժողկոմսովետի անունից Ստալինի հեռագրի վրա, հայտարարեց, որ անգլիացիների հրավիրումն

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 369։
[2] Նույն տեղում, էջ 380 (ընդգծումը—Ե. Ա.)։

անթույլատրելի է և պահանջեց քննարկման չդնել անգլիացիներին հրավիրելու հարցը։ Ձայների չնչին մեծամասնությամբ ընկ. Շահումյանի առաջարկը մերժվեց, որի առթիվ ընկ. Շահումյանը, որպես կենտրոնական իշխանության ներկայացուցիչ՝ վճռական բողոք հայտնեց։

... Հազար անգամ իրավացի էին Բաքվի մեր ընկերները...

... Նրանք հրաժարվելով նման ձևով հաշտություն կնքելուց, մի այնպիսի քայլ են արել, որ ոչ թե խոսքով, այլ գործով սոցիալիստների համար միակ արժանի քայլն է»[1]։

Այդ շրջանում արդեն ձերբակալված էին Շահումյանը և Բաքվի կոմիսարները, որոնց 1918 թ. սեպտեմբերի 20-ին անգլիական հրամանատարության և այսպես կոչված «ցենտրոկասպիյ»-ի կոնտրռևոլյուցիոն—էսերական կառավարության դեկավարների դաղտնի որոշմամբ, Կրասնովոդսկի բանից դուրս տանելով՝ Ախչակույմայի ավազուտներում խոշտանգումների ենթարկելուց հետո գնդակահարեցին։

Դադարից բարախելուց Շահումյանի բոցավառ սիրտը... նա, որ դաստիարակվել էր Լենինի, բոլշևիկների պարտիայի կողմից և մարմնավորել էր լենինյան տիպի բոլշևիկի բոլոր հատկությունները, մինչև իր կյանքի վերջը մնաց Լենինին արժանի աշակերտ և զինակից, զոհվեց ռևոլյուցիոներների մարտական դիրքերում, աննահանջ և աննկուն իր համոզմունքների մեջ։ Շահումյանն իր խոսքերով այդ դեղեցիկ կերպով արտահայտել է 1918 թ. հուլիսի 25-ին, Բաքվի սովետի ընդլայնած նիստում անգլիացիներին Բաքու հրավիրելու էսերների, դաշնակների, մենշևիկների դավաճանական առաջարկի դեմ իր արտասանած ճառում, որտեղ նա ասել է՝

«Հաղթած դավաճանները փորձում էին մեզ շրջել մատնության ուղին, բայց մենք դերադասում ենք մեռնել ռևոլյուցիոներների փառապանծ դիրքերում, քան թե փրկել մեր կյանքը մատնության ու դավաճանության գնով»։

Լենինի և Շահումյանի մեծ բարեկամությունը, նրանց հանդիպումների և նամակագրության պատմությունը ոգեշունչ մի օրինակ է, այն շատ խոշոր նշանակություն ունի մեր կադրերի ռևոլյուցիոն-դաղափարական դաստիարակության համար։

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 28, էջ 6—9։
[2] Տես «Բակինսկի ռաբոչիյ» թերթի № 211, 1922 թ.